



Տնական Համար




Սիրելի՛ ընթերցող,

Գևորգյան Հոգևոր ճեմարանի տեսչության, գասախոսական կազմի, ուսանողության և ԷԼ պարբերականի խմբագրակազմի անունից ջերմորեն շնորհավորում ենք Ձեր Ամանորի և մեր Տեր Հիսուս Բրիտանոսի Սուրբ Ծննդյան բերկրալի տոների առթիվ:

Ի խորոց սրտի աղոթում ենք, որ Նորածին Փրկչի Ծննդյան հրեշտակային ավետիսով պարուրված, նորովի չհերոժույթ և եռանդով շարունակեք իրականացնել Աստուծոյ Ձեզ շնորհված քաղցր, բայց և պատասխանատու առաքելությունը:

Մաղթում ենք, որ Հանուն մեր փրկության Մանկացած Բանն Աստծո Սուրբ Աջը մշտապես զորավիպ լինի Ձեզ Իր խի կենարար Խոսքի քարոզչության նվիրական գործում պարգևեղով բազմաբույր շունչ և առատ օրհնությունք:

Սիրով և աղոթքներով  
Էլ-պարբերականի խմբագրակազմ





«Հունձք բազում էն. Եւ մշակք սակաւ: Արդ, աղաչեցք զՏէր Հնձոց. Չի Հանցէ մշակք  
ի Հունձս իւր...» (Մատթ. Թ 37)

ընթացքում Ճեմարանի  
իրադարձությունն իհարկե  
ձեռնադրությունն էր: Տ.  
ձեռամբ Ճեմարանի եւ  
սաներ Մայր Տաճարում  
աստիճան: Էլ պարբերականի  
չսորհավորում է նորոգ ձեռնադրյալ մեր եղբայրներին:



2016թ. վերջին շաբաթվա  
Համար ամենից նշանակալից  
սարկավազական  
Մուշեղ եպ. Բաբայանի  
քահանայից լարանի 31  
ստացան սարկավազության  
խմբագրակազմը ջերմորեն

Գեկտեմբերի 28-ին Գեորգյան Հոգևոր ձեմարանում տեղի ունեցավ ամենամյա  
տոնական միջոցառում անապառնով ընտանիքների երեխաների Համար: Գեղեցիկ  
Հանդիսությունն այս անգամ կազմակերպվել էր ԳՀՃ Ե լարանի սաների ջանքերով ԵՀԽ  
Հայաստանյայց Կրր  
աջակցությամբ եւ Հայ  
գրասենյակի  
Միջոցառման  
Հրավիրվել էին շուրջ  
երեխաներ, ում Համար  
տարբեր խաղեր,  
ներկայացումներ:  
չխախտելով վերջում ներս եկավ Կաղանդ պապը եւ նվերներ բաժանեց ըրեխաներին:  
Ճեմարանականներն առիթ ունեցան նաեւ «Ներկիր ինքր» պլումների պատկերները  
երեխաների Հետ նկարազարդելիս՝ վերջիններիս ներկայացնել այդ պատկերներում  
ներկայացված աստվածաշնչային դրվագները:



Սեղան Հիմնադրամի  
միանություն խաչ  
մասնակցությամբ:  
չըմանակներում  
Հիտուն ընտանիքների  
կազմակերպվեցին  
մանկակն  
Ավանդույթը

### Ճեմարանական Կաղանդներ



**Գեորգյան Հոգևոր ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանի  
խոսքը՝ ասված Ամանորի առթիվ**

Ամեն տարի, երբ Աստված մեզ առիթ է տալիս եւս մեկ անգամ՝  
տարեմուտի շեմին կանգնելու, անխուսափելիորեն սկսում ենք  
անդրադարձ ունենալ անցած 365 օրերի մեր կյանքին:

Ոմանք  
լցված  
են միայն

ուրախությամբ  
վերհիշում  
բոլոր



ձեռքբերումները, ուրիշներն ավելի  
կենտրոնանում են թույլ տված սխալների ու  
սայթաքումների վրա, իսկ այլը իրենց Հաջող ու ձախտող  
փորձառություններն առիթ են դարձնում ավելի  
իմաստնանալու եւ իրենց կյանքին բացարձակ բնորոշումներ  
տալուց ավելի գերադասում կյանքը նորովի բացահայտել:

Քրիստոնյաներս Հատկապես գիտենք նորի  
կարեւորությունը: Գիտենք Քրիստոսով նոր մարդ  
դառնալու, ապաշխարությամբ սրբվելու բերկրանքը: Ուստի  
մեզ Համար Ամանորը կամ Նոր տարին լուկ օրացուցային  
Հանգրվանից վերածվում է անտեսանելի մի ճամփաբաժանի՝  
նոր կյանք կերտելու, նորից սկսելու, նորից սխալվելու եւ նորից  
ուաքի կանգնելու:

Պատմությունը յուրաքանչյուր ազգի գանձարանն է, առանց  
պատմության չկա ազգ, չկա ժողովուրդ: Մենք Հայերս  
գիտենք պատմություն փայփայել: Սակայն երբեմն  
պատմությունը մեզ Համար կարող է դառնալ բնակատեղի,  
ամփոփոխ Հասցե, ուր ապրում ենք, որով մտածում ենք եւ  
ինչին ամենից շատն ենք նվիրվում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշխարհ գալով պատմությունը  
դարձավ մտուր, ներկան դարձավ դպրոց իսկ ապագան՝  
բնակության վայր: Ինչպես անգլիացի Թ. Էս. Էյլիոթը  
կասեր. «Անցյալ տարվա բառերը պատկանում են անցյալ

տարվա լեզվին, իսկ գավիք տարվա բառերը սպասում են մի նոր ձայնի»:

Նոր կյանքով ապրել երբեմն նշանակում է թոժափել անցյալի բարոյությունը, ազատվել այն ամենից, ինչ պիտի խոչնդոտ լինի քեզ՝ կյանքի նոր հորիզոններ բացորոշելու համար: Սա նման է ջրով լի բաժակին, որ միայն մի քանի բույսի ձեռքով մեջ պահելով որեւէ ցավ չես զգում, սակայն այն տեսականորեն՝ մեկ ժամ կամ մեկ օր պահելով ձեռքդ պիտի թերեւս անզգայանա եւ անկարող դառնա գործելու: Փաստորեն խնդիրը մեղքի կամ բարոյության ինչ լինելը չէ, այլ թե որքա՛ն է մարդ այն պահում եւ իրենից չի վանում:

Ամենորն ուրախություն է պարգևում յուրաքանչյուրիս: Այն նոր հույսեր, նոր սպասումներ ունենալու հնարավորություն է ընձեռում, որ անշուշտ հիմնված պեսք է լինեն ներկայի աշխատանքի ու ձգտումների վրա:

Եկեղեցու առաքելությունն իր սկզբնավորումից ի վեր, որպես Քրիստոսի խորհրդական մարմին, եղել է ճանապարհ ուղղորդող ճշմարտություն ուսուցանող եւ կյանք ընծայող առաքելություն: Այսօր, ավելի քան երբեւէ կարեւոր է եկեղեցու դերը մեր՝ քրիստոնյա հայերիս կյանքում: Այնտեղ ուր սաճմանում անդորր է խախտվում մեր գործն է խաղաղությունն ճանապարհը ցուցանել, երբ հասարակությունը հակված է ժամանակի անցողիկ բարքերին հետեւել, մեր գործն է անանց ճշմարտությունը ճանաչելի դարձնել եւ այնտեղ ուր հոգեւոր մահը ավելի վնասակար է դառնում քան մարմնականը, մեր գործն է վերստին Քրիստոսով լցված կյանքի ուղին բացայայտել:

ող որ նոր տարում Հայաստանեայց Սուրբ եկեղեցին, մեր ողջ ազգը դիմավորի եւ ապրի խաղաղության մեջ, թող բարերարն Աստված իր սիրատուն ու խնամարար Աչքի ներքո պահի սաճմանն այս պահին հսկող մեր եղբայրներին, թող որ այս տարվա մեջ եւս Հայոց Եկեղեցու առաքելությունը արդյունավորվի՝ ամենաառատ կերպով օրհնություն եւ խինդ պարգևներով մեզ բոլորիս:

Շնորհակալ Նոր Տարի:

Լուս գիշեր, սուրբ գիշեր...

Օբենդորֆի նեղլիկ փորձերը լուսավորվում էին առաջին ճյան ճերմակությունից: Կուսական լուսիցիան մեջ լավում էին միայն ինչ-որ մեկի ոտնաձայները: Երջապատող ճյան պես նա լուս էր. շտապում էր դեպի Չայքբուրդ տանող ճանապարհով: Սակայն նրան արագ քայլել չէր կարելի. բոխիչները մեկ տարի առաջ խորհուրդ էին սովել Հեռանալ Հայրենի քաղաք Մարիապոլսից եւ բնակվել փոքրիկ ու խաղաղ Օբենդորֆում, ուր միջավայրն առավել նպաստավոր էր: Բայց նա այստեղ ոչ սքի չուներ, անգամ մնալու տեղ չքնում էր Սուրբ Նիկողայոս եկեղեցու պաշակատանը, մնում պաշակների Հեռ: Եվ Հիմն, երբ ողջ քաղաքը խոր քուն էր մտել, նա շտապում էր իր միակ մտերիմ ընկեր Գրյուբերի մոտ: Հեռվից նշմարեց տունը, լույսերը վառվում էին:

Ինչո՞ւ են լույսերը վառվում: մի թե այսքան վաղ է արթնացել. մտածեց նա: Մոտեցավ դուռը թակեց. ոչ մի ձայն, ոչ մի արձագանք: Սկսեց ավելի ուժեղ բախել: Դուռը ճանշարով բացվեց. Գրյուբերն էր:

-Տես, թե ինչ եմ գրել, Հենց այս գիշեր, շատ լավն է, Գրյուբեր, սկսեց ոգ-որված խոսել, Հայացքը չկարելով գրպանից նոր Հանած թղթերից: Գրյուբերի դիմագծերից եւ ոչ մեկը չչարժվեց:

-Լսիր, քեզ ի՞նչ է պատահել:

Գրյուբերը կրկին ձայն չհանեց, ձեռքի շարժումով ներս Հրավիրեց: Նրա կինը անշարժ նստած էր բուխարու առջև՝ դիմացը՝ օրորոցի մեջ, անշարժ պառկած մի մանուկ: Կինը սկսեց աղիտորով արտասավել: Ամեն ինչ պարզ էր: Թղթերը նրա ձեռքից ընկան: Առանց խոսք ասելու դուրս եկավ սնից. լուսիցունը այլեւս չկար. ամենուրեք լացի ձայն էր Հնչում:

1818 թվական, դեկտեմբերի 24: Սուրբ Նիկողայոս եկեղեցու պայծառ լույսերի ներքո մանուկները խաղում էին բակում: Ամեն ինչ տոնական էր. մարդիկ շտապում էին եկեղեցի՝ մասնակցելու Սուրբ Ծննդյան ճրագալույցի պատարագին: Այն պեսք է շոտով սկսվեք, սակայն եկեղեցու միակ երգեհոնաչարը ուշանում էր:

Նա անպայման կգա, - բորբին Հուսադրում էր Հայր Ժողեֆը, - ուսուցիչները պատասխանատու են լինում: Իրականում ինքն էլ անհանգիստ էր: Բողեբերն անցնում էին, սակայն նա չկար ու չկար: Պատարագի վերջում, Հանկարծ, եկեղեցու դուռը բացվեց եւ ցրտից կարմրած դեմքով ներս մտավ երգեհոնաչարը՝ ձեռքին նոտաներ: Բորբը ետ նայեցին մի պահ: Նա, մարդկանց Հոծ բազմությունը ճեղքելով առաջ եկավ, նստեց երգեհոնի առջև ու սկսեց նվագել: Երաժշտության Հնչյունները միանգամայն գերեցին բորբին: Անքան գեղեցիկ ու ներդաշնակ էին դրանք, ճիշտ նման Սուրբ Ծննդյան գիշերին: Պատարագի ավարտին Հայր սուրբը մնարում էր Գրյուբերին, որն աննկատ Հեռացել էր՝ երգեհոնի վրա թողնելով նոտաներն ու ճիթված այն թերթերը, որնրք նա խկոյն ճանաչեց:

**Silent night! Holy night!**  
(FOR CHRISTMAS.)

**Carol 28.**

Si - lent night! Ho - ly night! All is calm, all is bright: Round yon Vir - gin Mother and Child,  
Ho - ly In - fant, so tender and mild, Sleep in heav - en - ly peace, Sleep in heav - en - ly peace.

2  
Silent night! Holy night!  
Shepherds quake at the sight!  
Glories stream from heaven afar,  
Heavenly hosts sing Alleluia!  
Christ, the Saviour, is born!  
Christ, the Saviour, is born!

3  
Silent night! Holy night!  
Son of God, love's pure light  
Radiant beams from Thy Holy Face  
With the dawn of redeeming grace,  
Jesus, Lord, at Thy Birth!  
Jesus, Lord, at Thy Birth!

Parish Choir, No. 74-4.

«Հայկական Հալոուինը» եւ Սուրբ Ծնունդը

Ամեն տարի Հոկտեմբերի 31-ին մի մեծ իրարանցում է սկսվում Երեւանի փողոցներում: Մարդկանց մի մասը շտապում է դիմակներ պատրաստել, դուռներ գնել, վրան աչք եւ բերան փորագրել, իսկ մյուս մասը շտապում է պատաններ պատրաստել, վրան գրել «ո՛չ Հալոուինին» կամ «ոչ օտարամուլթյանը» եւ շտապել փողոց իր բողբոջի ձայն բարձրացնելու համար:

Մեր այսօրվա իրականության մեջ մի շարք գիտնականներ փորձել են տալ այս սովորույթի աստվածաբանական իմաստի բացատրություններ՝ միաժամանակ փորձելով այդ ամենը կապել քրիստոնեության հետ, բայց եւ այնպես, վերջնական պատկերի մեջ ոչ ոքի չի հաջողվել այս տոնը ամբողջապես կտրել իր Հեթանոսական հիմքերից: Եվ ինչպես որ ֆրանսիական ավանդության այնպես էլ Հայկական ավանդության մեջ պահպանվել են այս տոնի Հեթանոսական արտաքին պատկերները, որոնք, հետագայում քրիստոնեա դարձած Ժողովրդի մեջ պահպանվելով աստիճանաբար սերտաճել են քրիստոնեական-ժողովրդական սովորույթներին:

Այսօր մոտ 30.000 ք/կմ տարածք ունեցող մեր Հայրենիքում մեր իսկ Հայրենակիցները իրենց բնակավայրերում Ամանորը եւ Սուրբ Ծնունդը տոնելու տարբեր սովորույթներ ունեն: Իսկ մոտ մեկ դար առաջ, երբ Արեւ մայան Հայաստանը այդ սովորույթներն առավել Արեւելյան Հայաստանում ծիրանենու եւ նունենու ճյուղերից, ձիթենու ճյուղերից: Ահա, այսպիսի սովորույթներից մեկն էլ, դժմովի էր: Այս ծիսական սովորույթը հիմնականում տարածված էր Արեւ մայան Հայաստանի մի քանի վիլայեթներում, ինչպես նաեւ Արեւելյան Հայաստանում՝ Արմենիի, Վայոց Ձորի նահանգներում:



Նույնպես բնակեցված էր Հայերով բազմազան էին: Օրինակ, տոնածառը պատրաստում էին իսկ Արեւ մայան Հայաստանում՝ տեղական Ժողովրդական ժամրէ կոչված արարողությունն

Դուռը կեղտական աշխարհում անդրաշխարհի խորհրդանիշն էր: Այն դրվում էր սաների շեմին, իսկ մեջը մոմ էր այրվում, որն այս աշխարհի լույսն էր խորհրդանշում: Լույսը պետք է հեռու վաներ անդրաշխարհից դուրս եկացած չար ուժերին:

Ժողովրդական պատկերացումների համաձայն անդրաշխարհը գտնվում էր խորը գետնի տակ: Այդ իսկ պատճառով Հայաստանում Սուրբ Ծննդյան տոնների ժամանակ, դժմովը փորելով մեջը լույս էին դնում, եւ կապելով երկար պարանից, իջեցնում էին խորը մի հորի մեջ: Սա խորհրդանշում էր անդրաշխարհում Քրիստոսի Լույսի տարածումը, կամ Քրիստոսով անդրաշխարհի խավարի լուսավորումը: Այդ ամենը կարճես թե ավետարանական ոգով հարմարցվում էր Եսայի մարգարեի բերանով ասված խոսքին. «Երկիր՝ ու Չաբուղնի եւ երկիր՝ ու Նեփթաղիմի, ճանապարհ ծովի, մյուս ավիը Յորդանանի, Գալիլեա Հեթանոսների, խավարի մեջ նստած Ժողովուրդը մեծ լույս տեսավ եւ լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի եւ սովերների մեջ» (Մատթ Գ 15-17): Հատկանշական է, որ ինչպես կեղտական, այնպես էլ Հայկական դուռների վրա փորագրվում էին աչքեր եւ բերան:

Սակայն Հարկ է՛նշել, որ այս ամենը միայն տեղական Ժողովրդական սովորույթներ էին, որոնք Ժողովրդի մեջ անցել էին դեռեւս ս Հեթանոսական ժամանակներից: Եկեղեցին երբեք չի օրհնել եւ չի սրբաբարձել նմանատիպ արարողությունները, այլ դրանց ուղղակիորեն նայել է որպես զուտ Ժողովրդական արարողություններ:

Պատրաստեց Հարություն սրկ. Քեչիշյանը